ՀԱՅ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՈՍԿԵ ԴԱՐԸ

Ա. Խ. ՇԱՀԻՆՅԱՆ

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունը, որը ազատություն բերեց բազմաչարչար հայ ժողովրդին, Հայաստանում լայն հնարավորություններ ստեղծեց ոչ միայն արտադրողական ուժերի, այլև ժողովրդի հոգևոր ուժերի բազմակողմանի զարգացման համար։ Սովետական Միության բոլոր ազգերի եղբայրական ընտանիքում, ռուս մեծ ժողովրդի անշահախնդիր օգնությամբ, աճեց ու զարգացավ Սովետական Սոցիալիստական Հայաստանը։ Սոցիալիստական կարգերի տարիներին բուռն թափով զարգացող արդյունաբերության ու գյուղատնտեսության հետ միասին փարթամորեն ծաղկեցին նաև Սովետական Հայաստանի ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան ու արվեստը։ Եվ այսօր հայ ժողովուրդը հպարտանում է կուլտուրական այն արժեքներով, որ ստեղծել է նա Սովետական իշխանության տարիներին։

Մեր պարտիայի ու պետության ստեղծող Վ. Ի. Լենինը ասում էր, որ ոչ մի տեղ ժողովրդական մասսաները այնքան շահագրգռված չեն իսկական կուլտուրայով, ինչպես մեզանում, ոչ մի տեղ այդ կուլտուրայի հարցերը չեն դրվում այնպես խոր ու հետևողականորեն, ինչպես Սովետական երկրում։ Անցած 40 տարիների ընթացքում հայ ժողովուրդը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ապրեց իր իսկական վերածնունդը, իր կյանքի ու մշակույթի փառավոր ոսկեդարը։

Ազատագրված ժողովուրդը հեքիաթային վերելք ապրեց կուլտուրական շինարարության բոլոր բնագավառներում։ Տեղի ունեցավ իսկական կուլտուրական հեղափոխություն, որպիսին չէր տեսել հայ ժողովուրդը իր բազմադարյան պատմության ընթացքում։ Մինչև Սովետական իշխանության հաստատումը երկրի ազգաբնակչության 90 տոկոսից ավելին անգրագետ էր, իսկ 1940—1941 թթ. Հայաստանը դարձավ համատարած գրագիտության ռեսպուբլիկա։ Պատմության մեջ առաջին անգամ պայմաններ ստեղծվեցին, որպեսզի աշխատավորական լայն մասսաները հայրենական կուլտուրայի արժեքներին։ Ստեղծվում է դպրոցների, գրադարանների, խրճիթ-ընթերցարանների, ակումբների, կուլտուրայի տների լայն ցանց. գրքի լայն պրոպագանդան պետական նշանակություն է ստանում։ 1913 թ. Հայաստանում գործում էր 13 գրադարան, ընդամենը 120 հազար կտոր գրքով։ Սովետական իշխանության տարիներին խոշոր չափով զարգացավ գրադարանային գործը։ Այսպես, 1940 թ. ռեսպուբլիկայում կար 908 գրադարան 3,5 միլիոն կտոր գրքով, իսկ հոբելյանական՝ 1960 թ. բոլոր տիպի գրադարանների թիվը հասավ 2801-ի, ավելի քան 16,5 միլիոն կտոր գրքով։ Ռեսպուբլիկայում չկա մի որևէ գյուղական բնակավայր, որը չունենա մեկից ավելի գրադարան։ Միությունա-

կան խոշորագույն գրադարաններից է Հայկական ՍՍՌ Ալ. Մյասնիկյանի անվան պետական ռեսպուբլիկական գրադարանը, որը հիմնվել է դեռ 1921 թ. 40 հազար գրքային ֆոնդով։ Նրա գրքային ֆոնդը այժմ կազմում է ավելի քան 4,5 միլիոն գիրք։ Խոշոր գրադարաններ են Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի, Պետական համալսարանի, Երևանի և Լենինականի քաղաքային գրադարանները։ Երևանում է գտնվում Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հին ձեռագրերի գիտա-հետազոտական ինստիտուտ-Մատենադարանը։

Ակումբը և կուլտուրայի տունը նոր երևույթ են հայկական գյուղի համար։ Սովետական իշխանության տարիներին ստեղծվեց այդ հիմնարկների խիտ ցանց։ Եթե 1940 թ. կային 900 ակումբ և կուլտուրայի տուն, ապա այսօր ռեսպուբլիկայի քաղաքներում և գյուղերում արդեն գործում են 1043 ակումբ, 59 կուլտուրայի տուն։ Ակումբներին և կուլտուրայի տներին կից գործում էին 2800 ժողովրդական ինքնագործ և այլ տիպի խմբակներ, ինչպես նաև ավելի քան 50 կուլտուրայի համալսարաններ և դպրոցներ։ Հարյուրավոր կոլտնտեսություններ ստեղծել են հոյաշեն ակումբային շենքեր և կուլտուրայի տներ բոլոր հարմարություններով։

1960 թվականին ռեսպուբլիկայի մոտ 500 գյուղ կունենան իրենց ակումբային նոր շենքերը։ Նախասովետական հայ գյուղը գաղափար չուներ կինոյի մասին։ Ամբողջ երկրում կային չորս այսպես կոչված «իլյուզիոններ»՝ Երևանում, Ալեքսանդրոպոլում, Կարսում։ Երևանի և Ալեքսանդրոպոլի «իլյուզիոնները» սպասարկում էր միևնույն կինոմեխանիկը։ Այժմ Սովետական Հայաստանում գործում են 538 կինոթատրոն և կինոկետեր, որոնցից քաղաքում՝ 80 և գյուղում՝ 458։ 1959 թվականին կինոթատրոնները սպասարկել են 15380 հազար հանդիսատես։ Ռեսպուբլիկայի բոլոր քաղաքներում և շրջանային կենտրոններում Սովետական իշխանության տարիներին կառուցվել են բազմաթիվ ընդարձակ, հարմարավետ կինոթատրոնների շենքեր։

Սովետական Հայաստանի կուլտուրական կյանքի անբաժանելի և կարևոր մասն են կազմում ռադիոհաղորդումները և հեռուստատեսությունը։ Երևանի ռադիոն կազմակերպում է բազմազան հաղորդումներ հայերեն, ռուսերեն, աղրբեջաներեն և քրդերեն։ Ռեսպուբլիկայում ռադիոընդունիչների թիվը հասնում է ավելի քան 111 հազարի, որից գյուղական վայրերում՝ 56 հազար։ Այժմ Հայաստանում տարածվում է ավելի քան 600 հազար թերթ և հանդես։

Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ տարիներից սկսեցին կազմակերպվել թանգարաններ և տուն-թանգարաններ, որոնց թիվը հասնում է 20-ի։ Այժմ գործում են Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմական, Գրականության և արվեստի թանգարանները, Երևանի, Լենինականի, Կիրովականի, Կամոյի գավառագիտական թանգարանները, Ստ. Շահումյանի, Հ. Թումանյանի, Խ. Աբովյանի, Հ. Հովհաննիսյանի, Պերճ Պռոշյանի և շատ ուրիշ տուն-թանգարաններ։

Հայ ժողովրդի բազմադարյան և հարուստ կուլտուրայի մեջ իր նշանակալի տեղն ունի տպագիր գիրքը։ Տպագրական կուլտուրան իր իսկական ծաղկումն ապրեց սովետական կարգերը հաստատվելուց հետո միայն։ Բավական է նշել, որ 1913 թ. Հայաստանում հրատարակվել է ընդամենը 55 գիրք, 80 հազար տպաքանակով, իսկ տխրահռչակ դաշնակների տիրապետության

օրոք՝ 1918 թ. լույս է տեսել 6 անուն գիրք։ Մինչդեռ 1920 թ. մինչև 1960 թ., չհաշված ամսագրերն ու թերթերը, լույս են տեսել 22 հազար գիրք ու բրոշյուր։ Այսպիսով, Սովետական Հայաստանում մայրենի լեզվով շատ ավելի գիրք է հրատարակվել, քան առաջին հայ տպագիր գրքից սկսած (1512) մինչև սովետական կարգերի հաստատումը։ Միայն 1959 թ. ռեսպուբլիկայի բոլոր 8 հրատարակչությունների գծով լույս է տեսել 1168 անուն գիրք, ավելի քան 7 միլիոն տպաքանակով։ Սովետական Հայաստանում այժմ լույս է տեսնում 87 թերթ, 356 հազար տպաքանակով, 1913 թ. 6 թերթի և ընդամենը 3500 տպաքանակի դիմաց։ Այժմ լույս են տեսնում նաև 63 ամսագիր և հանդես, տարեկան 1904400 տպաքանակով։ Նշենք նաև, որ Սովետական Հայաստանը 1920—1954 թթ. ընթացքում տպագրված գրքերի թվով Սովետական Միության մեջ բոնում էր 4-րդ տեղը, իսկ տպաքանակով՝ 8-րդ տեղը։

Արագ թափով աճել է պոլիգրաֆիական բազան։ Մինչև սովետական կարգերի հաստատումը՝ Երևանում, Ալեքսանդրոպոլում և Էջմիածնում կար միայն արհեստանոցների նմանվող 4—5 տպարան, որոնց տարեկան արտադրողական կարողությունը միասին վերցրած 5 միլիոն տպագրական թերթից չէր անցնում։ Այժմ գործում են 55 տպարան, մոտ 200 միլիոն տպագրական թերթ արտադրողականությամբ։ Անցած տարիներին պոլիգրաֆ արդյունաբերության ընդլայնում հանդես եկան բազմաթիվ վարպետներ, որոնք աչքի են ընկնում իրենց գիտելիքներով և բարձրորակ արտադրանքով։ Վաղուց է ինչ հիմք է դրված նաև գունավոր տպագրության։ Ռեսպուբլիկայում տարեցտարի ընդարձակվում է գրքի վաճառքի գործը։ Այժմ գործում են ավելի քան 120 գրախանութ և կրպակներ, որոնց միջոցով տարեկան վաճառվում է մոտ 43 միլիոն ռուբլու գիրք։ Հատկանշական է, որ Սովետական Հայաստանի գրքերը վաճառքի են հանվում ավելի քան 50 երկրներ՝ Չինաստան, Չեխոսլովակիա, Լեհաստան, Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկա, ԱՄՆ, Ֆրանսիա, Իրան, Անգլիա, Ճապոնիա, Ավստրիա, Ֆինլանդիա, Իտալիա, Շվեդիա, Դանիա, Արաբական երկրները, Կանադա, Բրազիլիա, Արգենտինա և այլուր։

Ռեսպուբլիկայի աշխատավորության կուլտուրական վերելքին զուգընթաց փարթամորեն աճել ու զարգացել են սովետահայ արվեստի բոլոր ճյուղերը։

Սովետական կարգերին նախորդող շրջանում Հայաստանում չի եղել ոչ մի մշտական գործող պետական թատերախումբ։ Տարիների ընթացքում կազմվել ու մի քանի ամիս հետո կազմալուծվել են առանձին թափառաշրջիկ խմբեր։ Նախասովետական շրջանի հայ թատերական արվեստի տաղանդավոր ներկայացուցիչները երազել են ունենալ մշտական գործող թատրոն։ Նրանց երազներն ու իղձերը իրականացան միայն սովետական հասարակարգում։

Սովետական կարգեր հաստատվելուց հետո կառավարությունը ձեռնարկեց Պետական թատրոնի կազմակերպմանը։ Տարեցտարի ավելացավ թատրոնների թիվը. ներկայումս գործում են Ալ. Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի ակադեմիական, Սունդուկյանի անվան Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանակիր դրամատիկ ակադեմիական, Ստանիսլավսկու անվան ռուսական, Երաժշտական կոմեդիայի, Պատանի հանդիսատեսի, Տիկնիկային, Լենինականի, Կիրովականի, Արտաշատի, Գորիսի, Ղափանի և Կամոյի թատրոնները, 10 ժողովրդական թատրոններ, հա-

ցյուրավոր թատերական ինքնագործ խմբեր։ Երևանում գործում է նաև Պետական կրկեսը։

Սովետական Հայաստանի բոլոր թատրոնների մեջ առաջին տեղն իրավամբ պատկանում է Սունդուկյանի անվան թատրոնին, որը կազմակերպվել է 1921 թվականին և հատուկ դեր է խաղում սովետահայ թատերական կուլտուրայի զարգացման մեջ։ Այդ թատրոնը ստեղծել է սքանչելի բեմադրություններ մի ամբողջ շարք և ավագ սերնդի լավագույն կադրերի կողքին դաստիարակել ու աճեցրել է տաղանդավոր վարպետ դերասաններ, ռեժիսյորներ։ Վերջին տարիներին թատրոն են եկել խոստումնալից երիտասարդ դերասաններ։ Հենց կազմավորման սկզբից թատրոնն իր ստեղծագործական պրակտիկան սերտորեն կապեց ռուսական սովետական թատրոնի հետ, որը և մեծապես խթանեց նրա առաջխաղացումը։ Հայ դասական դրամատուրգիայի լավագույն գործերը և առաջին հերթին Սունդուկյանի, Շիրվանզադեի, Պարոնյանի պիեսները իրենց բեմական մարմնավորումն են գտել թատրոնի բեմում։ Սունդուկյանի թատրոնի խաղացանկում մշտական տեղ են բռնել ռուս, արևմտաեվրոպական դասական դրամատուրգիայի և ժամանակակից սովետական դրամատուրգիայի լավագույն պիեսները։ 1941 թվականի հունիսին, Հայրենական Մեծ պատերազմի նախօրյակին, Մոսկվայում տեղի ունեցան Սունդուկյանի անվան թատրոնի գաստրոլները, որոնք անցան մեծ հաջողությամբ։

Հայաստանի թատերական արվեստի զարգացման գործում կարևոր դեր են խաղում նաև մյուս թատրոնները։ Անցած տարիներին աճեցին նաև սովետահայ դրամատուրգիայի կադրերը։

1932 թվականին հայ ժողովրդի պատմության մեջ առաջին անգամ ստեղծվեց Օպերայի և բալետի պետական թատրոն։ Այդ թատրոնի ստեղծումը կապված է ռեսպուբլիկայի ժողովրդական լայն մասսաների կուլտուրական պահանջների աճի հետ։ Նրա զարգացումն ընթացել է ռուս, արևմտաեվրոպական և հայ օպերային կուլտուրայի հիման վրա։ Այստեղ բեմադրվել են համաշխարհային օպերային գրականության լավագույն նմուշները։ Թատրոնի խաղացանկի ոսկե ֆոնդն են կազմում «Ալմաստ», «Անուշ», «Դավիթ Բեկ», «Արշակ Երկրորդ» օպերաները, ինչպես նաև «Գայանե», «Խանդութ» բալետները, «Լուսաբացին», «Արծվաբերդ» օպերաները և սովետահայ այլ կոմպոզիտորների գործեր։ 1939 թվականի հոկտեմբերի 20-ին ՍՍՌՄ Մեծ թատրոնում բացվեց հայկական արվեստի տասնօրյակը։ Օպերայի և բալետի թատրոնը ցուցադրեց անցած տարիների իր նվաճումները և արժանացավ մեծ գնահատականի՝ Լենինի շքանշանի։ Օպերայի և բալետի պետական թատրոնի ամենահիշոր նվաճումը նրա ստեղծագործական կոլեկտիվն է, որն այսօր հայկական օպերային թատրոնի պարծանքն է համարվում և որի համբավը տարածվել է Սովետական Միության մեջ և նրա սահմաններից էլ դուրս (ՍՍՌՄ ժողովրդական արտիստներ Գ. Գասպարյան, Տ. Սաղանդարյան, Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստներ Նար Հովհաննիսյան, Ավագ Պետրոսյան, վաստակավոր արտիստներ Մ. Երկաթ, Ե. Խաչիկյան, Է. Բաղդասարյան և ուրիշներ)։ Թատրոնը դաստիարակել է նաև բալետի սեփական կադրեր, ստեղծել է հիանալի սիմֆոնիկ նվագախումբ և երգչախումբ։

Սովետական իշխանության հաստատումը վերածնեց և նոր բարձունքների հասցրեց բազմադարյան երաժշտական կուլտուրան։ Հայ երաժշտու-

թյունը դարերի ընթացքում հաղթահարելով բազում դժվարություններ, կարողացավ պահպանել իր կենսունակությունը։ Ժողովրդի ստեղծած բազմերանգ երգն ու երաժշտությունը հանդիսացավ այն կենարար աղբյուրը, որից հայ երաժշտության խոշոր գործիչները՝ Տ. Չուխաջյանը, Կարա-Մուրզան, Մ. Եկմալյանը, Կոմիտասը, Ա. Տիգրանյանը, Ա. Սպենդիարյանը, Ռ. Մելիքյանը, Ա. Խաչատրյանը և ուրիշներ կերտեցին իրենց բարձրարժեք ստեղծագործությունները։

Միայն Սովետական իշխանության պայմաններում հնարավոր եղավ կազմակերպել երաժշտական կուլտուրայի այնպիսի խոշոր օջախներ, ինչպիսիք են Պետական կոնսերվատորիան, Օպերայի և բալետի պետական թատրոնը, Պետական ֆիլհարմոնիան։ Ներկայումս ռեսպուբլիկայում գոյություն ունեն 37 երաժշտական դպրոցներ։ Եվ այսօր սովետահայ երաժշտության պարծանքը հանդիսացող մեր ավագ և երիտասարդ սերնդի ներկայացուցիչները մեր իսկ երաժշտական հաստատությունների շրջանավարտներն են, որոնցից շատ շատերի համբավը դուրս է եկել մեր երկրի սահմաններից (Առնո Բաբաջանյան, Ա. Հարությունյան, Է. Հովհաննիսյան, Էդ. Միրզոյան, Ղ. Տեր-Ղազարյան և ուրիշներ)։

Սովետահայ երաժշտության ստեղծագործական ու կատարողական խոշոր նվաճումները առաջին անգամ ցուցադրվեցին 1939 թվականի հոկտեմբերին՝ Մոսկվայում կայացած արվեստի տասնօրյակի ընթացքում։

Երաժշտական կուլտուրայի ծաղկմանը մեծապես նպաստում է Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանակիր Հայկական ֆիլհարմոնիան, որն իր բազմաթիվ համերգային միավորումներով, մենակատարներով ռեսպուբլիկայի քաղաքներում և գյուղերում, ինչպես նաև նրա սահմաններից դուրս պրոպագանդում է հայկական կլասիկ, ժողովրդական, գուսանական երաժշտության հիանալի նմուշները և ժամանակակից սովետական կոմպոզիտորների ստեղծագործությունները։ Կազմակերպչորեն ձևավորվելով 1933 թվականին, Հայֆիլհարմոնիան հանդիսանում է մեր երաժշտական կուլտուրայի պրոպագանդայի խոշոր օջախներից մեկը։ Միութենական հռչակ է վայելում Կոմիտասի անվան կվարտետը, որը կազմակերպվել է դեռ 1925 թ.։ Նա համերգներով հանդես է գալիս՝ ինչպես Միության ռեսպուբլիկաներում, այնպես էլ արտասահմանյան շատ երկրներում։ Լայն ժողովրդականություն է վայելում Հայկական ժողովրդական երգի ու պարի վաստակավոր անսամբլը՝ ժողովրդական արտիստ Թաթուլ Ալթունյանի ղեկավարությամբ։ Անսամբլը հսկայական աշխատանք է կատարել, հրապարակ հանելով բազմաթիվ ժողովրդական երգեր ու պարեր։ Նա մեծ հաջողությամբ ելույթներ է ունենում ինչպես Սովետական Միության բոլոր ռեսպուբլիկաներում, այնպես էլ արտասահմանյան երկրներում՝ Ալբանիայում, Բուլղարիայում, Հունգարիայում, Միացյալ Արաբական Ռեսպուբլիկայում, Լիբանանում։ Կատարողական կուռ կոլեկտիվներից է Հայաստանի պետական երգչախումբը։ Սիմֆոնիկ երաժշտության պրոպագանդայի նպատակին է ծառայում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը։ Գործում են նաև Հայաստանի պետական էստրադային նվագախումբը, Հայաստանի պարի պետական անսամբլը, ժողգործիքների անսամբլը և ուրիշ խմբեր։ Սովետական Հայաստանի հարուստ և բազմազան երաժշտական կատարողական արվեստը ապրում է զարգացման բուռն շրջան։ Տարեցտարի հանդես են գալիս նորանոր ուժեր՝ երաժշտական բոլոր ժանրե-

րի գծով։ Մեր կատարողներից ավելի քան 20 հոգի հանդիսանում են միջազգային զանազան մրցանակաբաշխությունների լաուրեատներ։

Ռեսպուբլիկայի երաժշտական կյանքում կարևոր տեղ է գրավում Հայաստանի սովետական կոմպոզիտորների միությունը, որն իր շարքերում ունի 73 կոմպոզիտոր և երաժշտագետ և որն իր ստեղծագործական հնարավորություններով համարվում է Սովետական Միության կոմպոզիտորական ստեղծագործական առաջավոր կազմակերպություններից մեկը։

Հայկական կերպարվեստի բարձր զարգացման մասին են վկայում բազմաթիվ հնագույն հուշարձաններ՝ սքանչելի մանրանկարները, որմնանկարները, զարդաքանդակները, գրքերի պատկերազարդումները, գեղանկարչական գործերը և այլն։

Սովետահայ կերպարվեստը հայ բազմադարյան կերպարվեստի պատմական ժառանգության օրինաչափ զարգացումն է՝ իր սոցիալիստական բովանդակությամբ և ազգային ձևով։ Սովետական կարգեր հաստատվելուց հետո Երևան եկան ռևոլյուցիոն բովանդակությամբ քաղաքական պլակատներ, աշխուժացավ քաղաքական երգիծանքը, կազմակերպվեց «Արմկավոռոստան». որը խոշոր գործ կատարեց այդ ուղղությամբ։ Նրա աշխատանքներին մասնակցում էին նկարիչներ Ս. Առաքելյանը, Գ. Բրուտյանը, Հ. Կոջոյանը և ուրիշներ։ Երևանում և այլ վայրերում սկսեցին կառուցվել ռևոլյուցիոն մեծ գործիչների, զոհված կոմունարների հուշարձաններ։ Կերպարվեստի զարգացումը ամուր հիմքերի վրա դնելու նպատակով Սովետական կառավարությունը ձեռնարկեց մի շարք կարևոր միջոցառումներ։ Կերպարվեստագետների նոր երիտասարդ կադրեր պատրաստելու համար 1925 թվականին Երևանում բացվեց կերպարվեստի դպրոց, ավելի ուշ՝ Հայրենական Մեծ պատերազմից հետո, հիմնվեց Գեղարվեստա-թատերական ինստիտուտ։ Կերպարվեստի պրոպագանդայի նպատակով նույն թվականին հիմնադրվեց Կերպարվեստի թանգարան, որը հետագայում վերածվեց պատկերասրահի և այժմ իր էքսպոնատների հարստությամբ և հազվագյուտությամբ համարվում է միութենական նշանակություն ունեցող պատկերասրահներից մեկը։ Հետագայում Լենինականում բացվում է կերպարվեստի երկրորդ թանգարանը։

1921—1928 թվականների ընթացքում Հայաստանում աշխատող արվեստագետներին եկան միանալու նկարիչներ Մ. Սարյանը, Ս. Ադաջանյանը, Փ. Թերլեմեզյանը, Գ. Գյուրջյանը, Վ. Գայֆեջյանը, Վ. Ախիկյանը, Ս. Արուսչյանը, քանդակագործներ Արա Սարգսյանը, Ս. Ստեփանյանը, Ուրարտուն և ուրիշներ։ Առաջին անգամ 1921 թվականին Երևանում կազմակերպվեց կերպարվեստագետների ստեղծագործական ցուցահանդես։

Կենտրոնական Կոմիտեի որոշմամբ 1932 թ. Հայաստանում կազմակերպվեց Կերպարվեստագետների միություն, որը հետագայում իր շուրջ համախմբելով ինչպես ավագ սերնդի, այնպես էլ երիտասարդ սերնդի ներկայացուցիչներին, նշանակալի դեր խաղաց սովետահայ կերպարվեստի զարգացման գործում։ Այժմ Միության մեջ համախմբված են 270 հոգի։ Կերպարվեստագետների միությունը հետագա տարիներին համալրվում է նաև Մոսկվայի ու Լենինգրադի բարձրագույն ուսումնական հաստատություններն ավարտած երիտասարդ արվեստագետներով։ Սովետահայ կերպարվեստի հաջողությունների ապացույցը հանդիսացան 1935 թ. Հայաստանում սովետական կարգերի հաստատման 15-րդ տարեդարձի, 1937 թ. Սովետական Կոնստի-

տուցիայի և հատկապես 1940 թ. Հայաստանում սովետական կարգերի հաստատման քսանամյակի հոբելյանական ցուցահանդեսները։ Մեծ հաջողությամբ անցավ «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակին նվիրված ցուցահանդեսը։ 1939 թ. Հայաստանում առաջին անգամ կազմակերպվեց և այժմ էլ հաջողությամբ գործում է շրջիկ ցուցահանդես՝ Ռ. Ռյուրջյանի ղեկավարությամբ։ Սովետական Հայաստանի նկարիչները հաջողությամբ մասնակցել են Մոսկվայում «Սոցիալիզմի ինդուստրիա», ապա կոմերիտմիության 20-ամյակի առթիվ և այլ թեմաների շուրջը կազմակերպված ցուցահանդեսներին, նրանք մասնակցեցին նաև Լոնդոնի, Բելգիայի և ապա Փարիզի ու Նյու-Յորքի ցուցահանդեսներին։ 1939 թ. հայկական արվեստի տասնօրյակի ընթացքում, Մոսկվայում կազմակերպվեց ցուցահանդես, որը մայրաքաղաքի հասարակայնության կողմից մեծ ընդունելություն գտավ։ Ցուցահանդեսը օգնեց Մոսկվայի հասարակայնությանը լրիվ պատկերացում կազմելու հայկական կերպարվեստի մասին։ Այդ նույն ցուցահանդեսը տեղափոխվեց Լենինգրադ և բացվեց Պետական Էրմիտաժի շենքում։

Հայրենական պատերազմի տարիներին կերպարվեստագետների ողջ ստեղծագործությունը ուղղվեց հայրենիքի պաշտպանության, թշնամուն ջախջախելու գործին ծառայելու նպատակին։ Հայրենական պատերազմի ընթացքում Հայաստանի կերպարվեստագետները կազմակերպեցին 60-ից ավելի զանազան ցուցահանդեսներ։ 1944 թ. սեպտեմբերի 15-ին Մոսկվայում բացվեց Հայաստանի կերպարվեստագետների գործերի ցուցահանդեսը, որտեղ ցուցադրվեցին Հայրենական պատերազմի տարիների նրանց լավագույն գործերը, Հայաստանի Կերպարվեստագետների միությունը նշվեց որպես Միության ամենաառաջավոր և տաղանդավոր միավորումներից մեկը։ «Պրավդա» թերթում տպագրված ակադեմիկոս Գրաբարի հոդվածում կարդում ենք. «Հայաստանի կերպարվեստի ցուցահանդեսը մի իրադարձություն է նույնիսկ ցուցահանդեսներով այնքան հարուստ ներկա ցուցահանդեսային սեզոնի համար։ Մեր առջև պատկերվում է լրիվ, անվերապահ հայկական արվեստը, ընդ որում ոչ միայն այն պատճառով, որ ամենուրեք պատկերված են Հայաստանի մարդիկ ու բնությունը, այլև այն պատճառով, որ դրանց մասին նկարիչների ստեղծագործությունները խոսում են իրենց սեփական, հայկական դեղարվեստի լեզվով»։

Հետպատերազմյան տարիներին կերպարվեստագետների առաջ ծառացան սովետական արվեստի հետագա վերելքի հետ կապված խնդիրները։ կյանքի խոր ճանաչողությունը, ավելի սերտ կապը ժողովրդի կյանքի ու աշխատանքի հետ, կոմունիզմ կառուցող մարդու բազմահարուստ ներքնաշխարհի և նրա հերոսական գործերի պատկերումը։

Սկսած 1945 թվականից գրեթե ամեն տարի ռեսպուբլիկայի կերպարվեստագետները իրենց գործերով հաշիվ են տվել ժողովրդին։ Ցուցահանդեսներ են կազմակերպվել ոչ միայն Երևանում, այլև Լենինականում, Կիրովականում և մի շարք այլ վայրերում։ Նրանք ակտիվ մասնակցել են Բաքվում, Մոսկվայում և Երևանում կազմակերպված Անդրկովկասի ռեսպուբլիկաների կերպարվեստագետների գործերի ցուցահանդեսներին։

1956 թ. Մոսկվայում հայկական արվեստի և գրականության տասնօրյակի առնչությամբ կազմակերպվեց կերպարվեստի խոշոր ցուցահանդես, որտեղ ներկայացվեցին ավելի քան 800 ստեղծագործություններ։ «Դա վառ և

խոշոր նվաճումներից մեկն էլ այն կադրերն են, որոնք աճել և դաստիարակվել են անցած տարիների ընթացքում, որի մեջ վճռական դեր են խաղացել սովետական ռուսական կինեմատոգրաֆիայի անվանի վարպետները։

Ինչպես սովետական ողջ կինեմատոգրաֆիայի, այնպես էլ սովետահայ կերպարվեստի վերջին տարիների նվաճումները սերտորեն կապված են ՍՄԿՊ Կենտկոմի որոշումների կենսագործման հետ։ Այսօր արդեն «Հայֆիլմի» արտադրած կինոնկարները լայն ընդունելություն են գտնում ոչ միայն ռեսպուբլիկայում և Սովետական ողջ Միության մեջ, այլև արտասահմանյան շատ և շատ երկրներում։

Փարթամորեն զարգացել են նաև ժողովրդական ստեղծագործությունը և գեղարվեստական ինքնագործունեությունը։ Ամենալայն կերպով իրենց դրսևորում են ժողովրդական տաղանդները։ Սովետական ֆոլկլորի ստեղծագործական կադրերի շարքում կան անվանի աշուղներ, գուսաններ, որոնք այսօր արձագանքում են նոր կյանքի հրատապ հարցերին։ Նրանք գովերգում են մեր ազատագրված հայրենիքը, ռևոլյուցիոն գործիչներին, կոմունիզմ կառուցող մարդկանց։

Դեռ շատ տարիներ առաջ աշուղ Սեպոն գրեց «Լենին փաշա» պոեմը.

Մի արդար օրենք կա՝ անունը բոլշևիկ,
Էս օրենքի ստեղծողն է Լենին հսկան.
Բոլշևիկը հարուստներին մահ ու չարիք,
Ժողովրդին՝ թե պահապան, թե բարեկամ։

Գուսան Հավասին գրել է Սովետական Հայաստանի մասին՝

Գեղատեսիլ լեռների մեջ երջանիկ
Բոյ ես քաշում ազատ, անուշ Հայաստան,
Վերածնված ծաղկած այգի անուշիկ,
Դեմքիդ ժպիտ զվարթ, անուշ Հայաստան։

Հայտնի գուսաններ են Աշոտը, Շահենը, Խաչատրյանը և շատ ու շատ ուրիշներ։

Սովետական իշխանության տարիներին լայնորեն զարգացել են նաև կիրառական արվեստի բոլոր ճյուղերը՝ գորգագործությունը, ասեղնագործությունը, ոսկեգործությունն ու ոսկերչությունը, միկրոմոզաիկությունը։

Քաղաքներում, կոլտնտեսություններում, բանվորական ավաններում դպրոցներում այժմ գործում են բազմաթիվ ինքնագործ խմբակներ։ Հանդես են գալիս հարյուրավոր մենակատարներ ժողովրդական ինքնագործունեության բոլոր ժանրերի գծով։ Ռեսպուբլիկայում վաղուց տրադիցիա են դարձել գեղարվեստական ինքնագործունեության օլիմպիադաները, վերջին տարիներս՝ երգի տոները։ Հաճելի է նշել, որ անսպառ են ժողովրդի գեղարվեստական ինքնագործունեության և ստեղծագործության մարդերը։ Նրան ամենալայն կերպով դրսևորվում են սովետական կարգերի, Կոմունիստական պարտիայի հոգատար գուրգուրանքի պայմաններում։

Հայրենական պատերազմին հաջորդած հետպատերազմյան տարիների ընթացքում սովետահայ արվեստի բոլոր ճյուղերը՝ թատերական արվեստը

երաժշտությունը, կերպարվեստը, ինչպես նաև գրականությունը իրենց բազմաղան ժանրերով վերելք ապրեցին, իսկ ՍՄԿՊ XX համագումարից հետո ստեղծագործական շատ ավելի բարդ խնդիրներ լուծելու մի բեղուն շրջան ունեցան։ Ստեղծվեցին սովետահայ արվեստի և գրականության նոր գործեր, առաջ եկան նոր երիտասարդ ուժեր։ Այդ ամենը իրավունք տվեց Մոսկվայում նորից ցուցադրել ռեսպուբլիկայի արվեստի ու գրականության նվաճումները։ 1956 թ. հունիսի 1-ից սկսվեց հայկական արվեստի և գրականության երկրորդ տասնօրյակը։ Մոսկվան նորից ուրախությամբ հյուրընկալեց մեր արվեստի և գրականության պատվիրակներին։ Ամբողջ տասնօրյակի ընթացքում Մոսկվայում մեծ հաջողությամբ բեմադրվեցին «Դավիթ Բեկ», «Արշակ Երկրորդ», «Անուշ» օպերաները, «Սևան» բալետը, հայ կլասիկ և սովետական դրամատուրգների գործերը. համերգային դահլիճներում կատարվում էին մեր երաժշտական և պարային կուլտուրայի լավագույն նմուշները, հայ գրողները մոսկվացիներին պատմում էին մեր գրականության նվաճումների մասին. կերպարվեստագետները հմայում էին դիտողներին իրենց կտավներով, գրքային ցուցահանդեսը ծանոթացրեց մոսկվացիներին հայ ժողովրդի տպագիր կուլտուրայի նվաճումներին, իսկ Մոսկվայի հիսունից ավելի կինոթատրոններում հանդիսատեսը դիտում էր Երևանի կինոստուդիայի արտադրած ֆիլմերը։ Հայ ժողովրդի ստեղծագործական նվաճումների ցուցադրումը Մոսկվայում վերածվեց ռուս և հայ ժողովուրդների, Սովետական Միության բոլոր եղբայրական ժողովուրդների անխախտ բարեկամության տոնի։

Հունիսի 13-ին կայացած տասնօրյակի եզրափակիչ համերգից հետո «Պրավդան» գրեց. «Տաղանդներով հարուստ է Սովետական Հայաստանը։ Դրանում ակնառու կերպով համոզվեցին այն մոսկվացիները, որոնք եղան հայկական արվեստի ու գրականության տասնօրյակի բազմաթիվ ներկայացումներում և տասնօրյակի մասնակիցների հետ ունեցած հանդիպումներում...»։

Հայկական արվեստի և գրականության տասնօրյակի արդյունքների մասին ՍՍՌՄ Կուլտուրայի մինիստրության տված հրամանի մեջ նշվեց, որ «Հայկական արվեստի և գրականության տասնօրյակը Մոսկվայում իր ծավալով և գեղարվեստական որակով նշանավոր իրադարձություն հանդիսացավ Սովետական Միության կյանքում»։ Սովետական Միության կառավարությունը բարձր գնահատելով մեր նվաճումները արվեստի և գրականության բնագավառում, հինգ հոգու շնորհեց ՍՍՌՄ ժողովրդական արտիստի կոչում, 11 հոգու պարգևատրեց Լենինի շքանշանով, 100 հոգու՝ Պատվո-նշան շքանշանով, 50 հոգու՝ Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով և 199 հոգու՝ Սովետական Միության մեդալներով։

Երկրորդ տասնօրյակից հետո, առաջնորդվելով ՍՄԿՊ XX և XXI համագումարի պատմական որոշումներով և ընկեր Ն. Ս. Խրուշչովի՝ «Ժողովրդի կյանքի հետ գրականության և արվեստի սերտ կապի համար» ելույթում արված ցուցումներով, ռեսպուբլիկայի կուլտուրայի և արվեստի աշխատողները պայքարում էին կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանին վայել գործեր ստեղծելու համար։ Հրապարակ եկան նոր օպերաներ և բալետներ («Արծվաբերդ», «Սոս և Վարդիթեր» օպերաները, «Մարմար» և «Սոնա» բալետները), նոր դրամատուրգիական գործեր («Նույն հարկի տակ» «Վարգեր և արյուն», «Վերջին մեխակները», «Գարնան անձրև») և այլն, սիմֆոնիկ նոր

ստեղծագործություններ, կերպարվեստի կոմպոզիցիոն կտավներ, Հայֆիլմ կինոստուդիան թողարկեց մի շարք գեղարվեստական ֆիլմեր, ստեղծվեց խրոնիկալ և դոկումենտալ ֆիլմերի նոր ստուդիա։ Ավելի հաճախակի դարձան սովետահայ արվեստի ներկայացուցիչների ելույթները Միության ռեսպուբլիկաներում։ Կազմակերպվեցին Օպերայի և բալետի պետական թատրոնի ելույթները Լենինականում, Կիրովականում, Ստեփանավանում և Ալավերդում, Երևանում տեղի ունեցան Անդրկովկասյան թատերական և երաժշտական գարուններ։ Առաջին անգամ Երևանում հանդես եկավ ՍՍՌՄ օպերայի և բալետի ակադեմիական Մեծ թատրոնը։ Սովետահայ դրամատուրգիայի մի շարք գործեր տեղ են գտել Մոսկվայի դրամատիկ թատրոնների խաղացանկում (Ա. Արաքսմանյանի «Քո սրտի կրակը» Մոսկվայի Լենինյան կոմսոմոլի անվան թատրոնում, Գ. Բորյանի «Նույն հարկի տակ» պիեսը՝ Մոսկվայի մարզային թատրոնում, Գ. Տեր-Գրիգորյանի «Վերջին մեխակները»—Մոսսովետի անվան թատրոնում)։

Սովետական Հայաստանի կուլտուրայի և արվեստի աշխատողները նորանոր գործերով դիմավորեցին ռեսպուբլիկայի քառասնամյա հոբելյանը։ Օպերայի և բալետի պետական թատրոնը բեմադրեց Գ. Արմենյանի «Խաչատուր Աբովյան» օպերան, Սունդուկյանի անվան դրամատիկ թատրոնը՝ «Դեպի ապագան» բեմական կոմպոզիցիան (Եղիշե Չարենցի գործերի հիման վրա), Ստանիսլավսկու անվան պետական թատրոնը՝ Լև Տոլստոյի «Աննա Կարենինան», Վ. Վիշնևսկու «Օպտիմիստական տրագեդիան», Լենինականի թատրոնը՝ «Արտակարգ լիազոր» պիեսը, որը նվիրված է ռևոլյուցիոն մարտիկ Գևորգ Աթարբեկյանին, Պատանի հանդիսատեսի թատրոնը՝ Կ. Սիմոնյանի «Յոթերորդ մոլորակը» և Հր. Ղափլանյանի «Նրա աղջիկը» ներկայացումները, Երաժշտական կոմեդիայի թատրոնը՝ Ս. Ջրբաշյանի «Երազիկ» կոմեդիան։ Ռեսպուբլիկայի բոլոր թատրոնները նոր բեմադրություններով դիմավորեցին քառասնամյակը։ Հայֆիլհարմոնիայի կատարողական բոլոր կոլեկտիվներն էլ նոր ծրագրերով հանդես եկան հանդիսատեսների առջև։ Նրա բեմերից հնչեցին Հ. Ստեփանյանի, Ա. Խուդոյանի, Ղ. Սարյանի, Գ. Եղիազարյանի, Առնո Բաբաջանյանի, Ալ. Հարությունյանի և մյուսների նոր գործերը։ Երևանում, Լենինականում, Կիրովականում և այլ քաղաքներում հանդես եկան սովետական երաժշտական կուլտուրայի հայտնի հայ վարպետները՝ ՍՍՌՄ ժողովրդական արտիստներ Ա. Մելիք-Փաշայանը, Պ. Լիսիցյանը, ՌՍՖՍՌ և Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստուհի Զարուհի Դոլուխանյանը, Կոմիտասի անվան վաստակավոր կվարտետը, ինչպես նաև Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ Ս. Քոչարյանը։ Այդ վարպետների ելույթները վերածվեցին սովետահայ արվեստի իսկական տոնի։ Նոր գործերով հանդես եկան Երևանի և ռեսպուբլիկայի մյուս քաղաքների ու շրջանների երաժշտական դպրոցների սաները։ Ավելի լայնորեն և կազմակերպված անցկացվեց «Ոսկե աշունը»։

Ամբողջ յոթ օր տևեց գեղարվեստական ինքնագործունեության և ժողովրդական ստեղծագործության ռեսպուբլիկական օլիմպիադան։ Շրջանային և ռեսպուբլիկական օլիմպիադաներին մասնակցեցին ավելի քան 2000 տարբեր խմբեր և 35 հազար կատարողներ։ Ռեսպուբլիկայի հարյուր հազարավոր աշխատավորներ մեծ հետաքրքրությամբ դիտեցին նրանց ելույթները։

Կազմակերպվեցին նոր ժողովրդական թատրոններ։ Ցուցադրվեցին նոր կինոֆիլմեր՝ «Հյուսիսային ծիածան» (սցենարը՝ Հ. Քոչարի, բեմադրությու-

ներ՝ Հայարտյանի), որը նվիրված է հայ ժողովրդի ազատագրական պայքարին և ռուս և հայ ժողովուրդների բարեկամությանը, «Պոեմ Հայաստանի մասին» (բեմադրությունը՝ Վ. Հայկազյանի), որը պատմում է Սովետական Հայաստանի նվաճումների մասին։

Երևանում բացվեց ռևոլյուցիայի թանգարան, որտեղ խնամքով հավաքված և ցուցադրված են 2500 զանազան փաստաթղթեր, ֆոտոնկարներ, դիագրամներ, գեղարվեստական գործեր, բրոշյուրներ և ուրիշ գործեր, որոնք պատմում են սովետական կարգերի հաստատման համար Հայաստանի աշխատավորության ռևոլյուցիոն պայքարի մասին։ Նոր կառուցված գեղեցիկ շենքում բացվեց սովետահայ կերպարվեստի խոշոր ցուցահանդես, որտեղ ցուցադրվում են ավելի քան 1000 գեղանկարչական, քանդակագործական և գրաֆիկայի ստեղծագործություններ։ Կազմակերպվեցին նաև հայ գրքի ցուցահանդես, ժողովրդական ստեղծագործության ցուցահանդես և այլն։ Տեղի ունեցավ Հայկական թատերական ընկերության հոբելյանական պլենումը՝ եղբայրական ռեսպուբլիկաների ներկայացուցիչների մասնակցությամբ։ Սովետական Հայաստանի արվեստի աշխատողները կազմակերպեցին ավելի քան 150 հանդիպումներ բանվորների և կոլտնտեսականների հետ։

Այժմ Սովետական Հայաստանի կուլտուրայի և արվեստի աշխատողները, ոգևորված Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ջերմ հոգատարությամբ, լարում են ուժերը կոմունիզմ կառուցող սովետական մարդուն արժանավայել ստեղծագործություններ տալու համար։

ЗОЛОТОЙ ВЕК АРМЯНСКОЙ КУЛЬТУРЫ

А. Х. ШАГИНЯН

(Резюме)

Как во всех республиках Советского Союза, так и в Армении в годы Советской власти произошла подлинная культурная революция, охватившая все области духовной жизни армянского народа.

Еще в 1940—1941 гг. Советская Армения превратилась в республику сплошной грамотности. С первых дней Советской власти началась организация множества школ, библиотек, клубов, домов культуры. В 1913 г. в Армении существовало всего 13 библиотек с книжным фондом в 120 000 книг. В настоящее время действуют 2800 разных библиотек с книжным фондом 16,5 миллиона книг. Крупнейшими библиотеками являются: библиотека им. Ал. Мясникяна, Академии наук Армянской ССР, Ереванского государственного университета, ереванская, ленинаканская городские библиотеки. Всемирной известностью пользуется находящееся в Ереване Государственное хранилище древних армянских рукописей — Матенадаран, где имеется свыше 13 тысяч древних рукописей и множество архивных материалов.

Создана широкая сеть клубов и домов культуры. Сейчас действуют 1043 клуба, 59 домов культуры и около 3000 самодеятельных кружков,

16 парков культуры и отдыха. Уже в 1960 г. в 500 селах имеются совершенно новые клубные здания. До установления Советской власти в Армении существовало всего четыре кинотеатра, а в настоящее время имеется 538 кинотеатров и киноточек, в том числе в сельских местностях 458. Только в 1959 г. обслужено 15,6 миллиона кинозрителей.

Создана широкая радиосеть; широкое распространение получило также телевидение.

В Советской Армении имеется 20 музеев и домов-музеев.

Культура книгопечатания занимает видное место в истории армянского народа. Первую печатную книгу армяне издали в 1512 г. в Венеции. Но на родном языке за годы Советской власти по количеству изданий и тиражу в Армении было издано больше книг, чем за сотни лет со дня выхода первой печатной книги. Только в 1959 г. всеми издательствами республики были изданы 1168 названий книг с тиражом свыше 7 миллионов экз. В настоящее время выходят 87 газет и 63 журнала. Армянская советская книга распространяется не только в Советском Союзе, но и свыше 50 зарубежных странах, в том числе в Китае, Иране, Англии, Японии, Швеции, Канаде, Бразилии, Аргентине, на континенте Африки.

За годы Советской власти пышно расцвело искусство армянского народа. До Советской власти мы не имели ни одного стационарного театра. В настоящее время действуют 12 государственных театров, 10 народных театров и сотни самодеятельных театральных кружков. Среди театров первое место по праву занимает драматический театр им. Сундукяна. С первых же дней своей творческой деятельности он стал центром широкого развития армянской советской театральной культуры, выпестовал видных мастеров и воспитал много молодых творческих кадров. Большую любовь и преданность завоевали в Армении также Ленинаканский, Кироваканский, русский драматические театры, районные театры, театр юного зрителя, музкомедии. В 1932 г. был организован театр оперы и балета им. Спендиаряна, который ныне является одним из известных своими достижениями оперных театров Советского Союза. За прошедшие годы композиторы Армении создали много монументальных произведений, ярких по своей тематике и жанровым особенностям. В Союзе композиторов насчитывается 73 человека.

В Советской Армении действуют госконсерватория, 37 музыкальных школ, Армфилармония со своими многочисленными коллективами, в том числе: заслуженный ансамбль армянской песни и пляски под руководством Т. Алтуняна, хоровая капелла, ансамбль армянского танца под руководством Эдуарда Манукяна, квартет им. Комитаса, симфонический оркестр и другие коллективы.

Союз армянских советских художников имеет в своих рядах 270 человек. В нем объединены лучшие мастера армянского советского изобразительного искусства, а также талантливые молодые художники. Произведения живописи и скульптуры наших художников систематически экспонируются не только в нашей республике, но и в других республиках СССР, а также в зарубежных странах.

Возникновение самого массового из всех видов искусств — кино — в Армении связано с первыми годами строительства новой жизни. Киностудия «Арменфильм» с 1924 по 1960 г. выпустила 225 картин и около 900 киножурналов и киноочерков. Многие ее фильмы с успехом показываются и в других республиках, а также в зарубежных странах.

Работники искусств Армении неоднократно демонстрировали свои лучшие достижения в Москве и в других городах Советского Союза, а также за рубежом.

Работники искусств Армении новыми произведениями встречают славное сорокалетие установления Советской власти в Армении.